



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2020 թվականի թիվ 26-Ա

ք. Երևան

#### ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 30-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 45.1. հոդվածի 20-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 30-ի «Հեռուստարձևերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը սահմանելու մասին» N 42-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Հեռուստարձևերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացման ընթացակարգը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևերը սահմանելու մասին»:
2. Որոշման 1-ին կետում «հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն հավելվածի» բառերը փոխարինել «հեռուստարձևերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացման ընթացակարգը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների» բառերով:
3. Որոշմամբ սահմանված Հավելվածը փոխարինել նոր խմբագրությամբ Հավելված N 1-ով և լրացնել նոր Հավելված N 2-ով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

22 ապրիլի 2020թ.  
ք. Երևան

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱՐԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացման կարգը:

Հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումը՝ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների փաստացի գործունեությունը օրենքին և լիցենզիայի պահանջներին համապատասխան իրականացնելու բացահայտման նպատակով իրականացվող դիտարկումն է, որն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստաընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործունեության մշտադիտարկումը ներառում է նաև տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունը:

Հանձնաժողովի աշխատակիցն իրականացրած մշտադիտարկման արդյունքներով կազմում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն Հավելված N 2-ի N 1 և N 2 ձևերի:

Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում են երկու օրինակից:

## II. ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

2. Հանձնաժողովն ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր:

Հանձնաժողովի աշխատակցի կողմից հեռուստաընկերությունների կամ ռադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն ուղղակի դիտարկման միջոցով իրականացվում է՝ հեռուստաընկերությունների կամ ռադիոընկերությունների կողմից հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումները դիտելու միջոցով:

Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ: Դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաև դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը:

Հանձնաժողովի աշխատակիցը իրականացրած մշտադիտարկման արդյունքում հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտում արձանագրելու դեպքում կազմում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն՝ համաձայն N 1 ձևի:

Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը N 1 ձևով կազմելուց հետո այն ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը: Արձանագրությանը կցվում են մշտադիտարկման առարկային վերաբերող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

## III. ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԻՏԱՐԿՈՒՄ

3. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է նաև հեռուստառադիոընկերություններում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Հեռուստառադիոընկերություններում

մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա:

Հեռուստաընկերություններում կամ ռադիոընկերություններում մշտադիտարկումը սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ղեկավարին կամ նրան փոխարինող իրավասու այլ անձի:

Եթե հեռուստառադիոընկերության ղեկավարը կամ նրան փոխարինելու իրավունք ունեցող անձը հեռուստաընկերության կամ ռադիոընկերության գործունեության վայրում չէ կամ հրաժարվում է ստանալ մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը և ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, հրաժարվում է ստորագրել և ստանալ արձանագրության երկրորդ օրինակը, ապա հրամանի պատճենը, արձանագրության երկրորդ օրինակը եռօրյա ժամկետում փոստային առաքման միջոցով ուղարկվում է հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, որը ստանալուց հետո միայն կարող է իրականացվել մշտադիտարկում:

Անհապաղ մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության դեպքում մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանի օրինակը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը փոստային առաքման միջոցով ուղարկվում են հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն մշտադիտարկումն իրականացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:

Հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ N 2 ձևով կազմելուց հետո այն ստորագրում են Հանձնաժողովի և հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչները: Հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում արձանագրությանը կցվում են հեռուստառադիոընկերության տիրապետության տակ գտնվող մշտադիտարկման առարկային վերաբերող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

Հեռուստառադիոընկերությունում իրականացված մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ և ստորագրում:

Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա հեռուստառադիոընկերություններում մշտադիտարկումն իրականացնող աշխատակիցը անհրաժեշտության դեպքում և բաժանորդների թույլտվությամբ կարող է մշտադիտարկում իրականացնել տեղում՝ բաժանորդի տանը:

#### IV. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԱՍՓՈՓ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Հանձնաժողովի աշխատակցի կողմից իրականացված մշտադիտարկան արդյունքում հեռուստառադիոընկերության գործունեության իրավախախտում արձանագրելու դեպքում, արձանագրությունը զեկուցագրով ներկայացվում է Հանձնաժողովի նախագահին: Գործընթացի հետագա ընթացքն ապահովելու համար Հանձնաժողովի նախագահը մակագրում է զեկուցագիրը համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը: Չեկուցագիրը համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը մակագրվելու օրը համարվում է վարչական վարույթի հարուցման օր: Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում մուտքագրվելուց հետո՝ ուղեկցող գրությամբ, փոստային առաքման միջոցով եռօրյա ժամկետում ուղարկվում է հեռուստառադիոընկերություն:

Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել Հանձնաժողով:

Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

Ձև N 1

Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՌԻՂԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ  
ՄԻՋՈՑՈՎ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. \_\_\_\_\_

« » \_\_\_\_\_ ի 20 \_\_\_\_ թ.

Ես՝ \_\_\_\_\_ Հեռուստատեսության \_\_\_\_\_ և \_\_\_\_\_ ռադիոյի \_\_\_\_\_ հանձնաժողովի \_\_\_\_\_

(մշտադիտարկում իրականացնող անձի պաշտոնը)

\_\_\_\_\_ և \_\_\_\_\_  
(մշտադիտարկում իրականացնող անձի անունը, (հեռուստարձնկերության կամ ռադիոընկերության լրիվ անվանումը)  
ազգանունը)

\_\_\_\_\_ եթերի մշտադիտարկման արդյունքում արձանագրել  
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

եմ.

(Մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները: Նշում է կատարվում մշտադիտարկման նպատակի, ժամանակահատվածի և իրավական հիմքերի մասին: Դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը: Նշում է կատարվում մշտադիտարկման առարկային վերաբերող ապացույցների մասին:)

Մշտադիտարկում \_\_\_\_\_ իրականացրած \_\_\_\_\_ անձ (Հանձնաժողովի \_\_\_\_\_ ներկայացուցիչներ)

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՇԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՏԵՂՈՒՄ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. \_\_\_\_\_

« » \_\_\_\_\_ ի 20\_\_\_\_թ.

Հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի 20\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ի \_\_\_\_-ի թիվ \_\_\_\_\_ հրամանը Հանձնաժողովի

\_\_\_\_\_, \_\_\_\_\_  
(մշտադիտարկում իրականացնող անձի պաշտոնը) (մշտադիտարկում

\_\_\_\_\_ի կողմից \_\_\_\_\_  
իրականացնող անձի անունը, ազգանունը) (հեռուստաընկերության կամ ռադիոընկերության լրիվ անվանումը)

իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվեց հետևյալը.

\_\_\_\_\_  
(Մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները: Նշում է կատարվում մշտադիտարկման առարկային վերաբերող հեռուստառադիոընկերության տիրապետության տակ գտնվող ապացույցների մասին:)

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Մշտադիտարկում իրականացրած անձ (Հանձնաժողովի ներկայացուցիչներ)

\_\_\_\_\_  
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հեռուստաընկերության կամ ռադիոընկերության տնօրենի կամ լիազորված ներկայացուցչի (կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը, որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինել տնօրենին) առարկությունները: Եթե հեռուստառադիոընկերության ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունը ստորագրել կամ խոչընդոտում է մշտադիտարկման իրականացմանը, նշում է կատարվում այդ մասին՝ նշելով նաև մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցչի անունը, ազգանունը և պաշտոնը:

---

---

---

---

---

---

---

---

Հեռուստաընկերության կամ ռադիոընկերության տնօրեն (ներկայացուցիչներ)

---

(անուն, ազգանուն, ստորագրություն)